

Ի՞նչ վաճառի Սեղըս (սան Մ)իթար.
եանց գրատունը և ամէն ազգային գը-
րատվածառայ քով: Կիսակազմին գինն
է ֆրանք 2 25:

րած նորութիւն ընդ սիրած աւարկան
աւելի բարձրացնող նորութիւն մը չէ,
այսինքն կ'ատէ այն նորութիւնը որ
սիրան ու զգացումը կը կրթեն, բարձր
կ'ազնուացնեն, ճշգրիտ կը մաքրեն,
և կը սիրէ այն նորութիւնը որ թէ
հին է, միտած է, զգուշ է, և
մեր սոյն հանդիսին վայրը կը նուա-
տացնեն, ըսել կուզեմ Մահմադըրու-
թեան տարեդարձի հանդէսը տարին
մէկ անգամ շատ մը Հայեր ի մի վայր
հաւաքելու միջոց մ'է նա, սակայն,
միայն առ երեւոյթս կը հաւաքէ դա-
նոնք. սրտեք, անդ հաւաքեալ բազ-
մաթիւ յուսիս և ամուլ սրտերը ի մի
ձուլուած մեծ նպատակին դեռ հասած
չէ, վասն զի շատերը «աւագման», բա-
նալիքի և այլ սոցալ պէս միտած գա-
ղափարներով տոգորուած՝ հանդիսա-
վայրը կը խճողուին և միայն կ'ուսեն,
կը խմեն, կեցցէ կը կանչեն և ծափ կը
զարնեն:

Աստ ընթերցողը պիտի հարցնէ թէ
«ինչ ընելու էր»: Երբ հարցին պա-
տասխանն է ահա ըսելիքս:

Յայտնի է թէ մայիս 24 ին Պէյքո-
զը վայելող Հայ մը ուր որ ալ լինի,
զայն անձկանօք կը յիշէ, կը զգայ նոյն
օրը անդ գտնուիլ: Յայտնի է նաև թէ
մէկ հատիկ կը կոչենք զայն, սակայն
ինչու մէկ հատիկ լինի, միթէ Հայ
ժողովուրդը ի մի վայր հաւաքող ու-
րիշ հանդէսներ չ'ունինք, այո, շատ
ունինք, նոյնն է Արմաշը, նոյնն է Ս.
Մարկոսը, Ս. Թորոսը, սուրբ և ալիք-
ներ՝ որոնց հաղարարութեան թիւնք
կը յաճախէ մեր ժողովուրդը, բոլորն
Հայը, Հայաստանցին, միայն Պոլսեցին
չէ. և այդ տեսակ հաւաքումները ա-
լևոր տարիներէ ի վեր կը շարունակ-
ուին, սակայն միշտ միեւնոյն են, միշտ
միևնոյն տղէտ ժողովուրդը կը մնան,
զի անդ ուրիշ բան չեն տեսներ կամ
լսեր, այլ միմիայն բերաւոր անգամ-
ներ իրենց կրկնուած բարեպաշտ լի-
նելը, համբերող լինելը, դժոխքին
կրակները... ևն. գտնէ «նգամ մ'ալ
չը լսեր անդ թէ՛ այդ բարեպաշտու-
թեան հետ, որ նախապաշարման հա-
սած է, կարևոր է նաև զիտութեան
կաթն ալ մակարդել, միով բանիւ անդ
մեր ժողովուրդը նոր բան կը բերէ չը
լսեր, և այս պատճառաւ նոր բանէն
կը խորշի մասամբ, թէպէտ և օգտա-
կարագոյն իսկ լինի նորը...:

Բայց ինչ թէ այդ բոլորոյն ըս-
տոյք լինէր, սակայն դժբաղդաբար,
շատ մը այնպիսի նոր բաներ ընդու-
նած է որ կը պղծէ իւր պարզ բարե-
պաշտութիւնը: Այսինքն իւր հայրերը
կամ գոնէ հաւերը, որչափ նախապա-
շարեալ այնչափ ևս աւելի առաքելի-
էին, իսկ նա այժմ նոր բան աւելցու-
ցած է, քմահաճ բառով ըսեմ, ներ-
կալ ժողովուրդը իւր համար լրա-
ւորուած է, առանց տաւուլ դուռնալի
ուստի չ'երթար. առանց գլուխները
տաքցնելու ևս չ'գառնար, առանց
զանազան անվայել ընթացիլ ուստը
օգնական չ'ըլլար. պարզ ըսելով իւր
նախնիք չ'ըրմ հաւատքով աւելի կ'եր-
թային, իսկ այժմանը միայն սովոր-
ութեան հազարադրու համար կ'եր-
թայ... Այդ սովորութիւնը յիշ-
լուս պատճառն այս է թէ շատ և շատ
ունինք հանդէսներ, որոնց ամենքն
ալ Պէյքոզի հանդէսին պէս Հայերը
մէկտեղ կը հաւաքին, ուր կ'ուսեն,
կը խմեն, կ'ըստնուն և կը դառնան:
Այժմ պէտք է դիտարկ թէ արդեօք
օգտակար են այդ հանդէսները, թէ

նոյնպիսի օգտակար են և ինչպէս: Որով
հետեւ այդ հանդէսները առիթներ են
ժողովուրդեան միացման, անշուշտ օգ-
տակար են և կը լինին միշտ եթէ կա-
րենանք լաւ ի կիր արկանել զանոնք,
իսկ օգտակարութեան չափը բազմա-
մամբ այլոց հետ քիչ է. այս հակիրճ
պատասխանները պարզելու համար
պէտք է ըսեմ:

Եթէ լինէի Հայաստանի մէկ ան-
կիւնը՝ խիստ անձկանօք պիտի վրձնա-
ռէի մայիս 24 ին Պէյքոզ ըլլալ. որով
հետեւ Պէյքոզը բազմաթիւ Հայաս-
տանի հանդէսներուն հետ աւելի վստա-
կը գտնուի, բայց շատ շատ հանդէս-
ներ ունինք, աւելի զարդարուն, շար-
ժուն, զգայուն և ազգու հանդէսներ
ունինք, աստ ժողովուրդեան հան-
դէսները խիստ շատ են, հազարաւոր
ընկերութիւններու մասնաւոր հան-
դէսները միայն կը գերազանցեն մեր
հանդէսը. իսկ ընդհանուր ազգային
հանդէսներու քով իրօք կը նստմանայ
մերը, այնպէս որ՝ եթէ մեր հանդէսը
չըլլայ, եթէ մայիս 24 ին չը վերա-
բերի, Հիւսիսային ազգային հան-
դէսներէն նուազ պիտի սիրեմ զայն,
ինչպէս ըսի սոցա հանդէսները մեծ
առաւելութիւն ունին մերինէն մանա-
ւանդ անոր համար որ՝ մեզ պէս գե-
ղեցիկ սեռը զգոյշ տեսնուելու մէջ վաթ-
թած կամ վաճառակներու մէջ վախճ-
չեն, այլ հանդէսին աւելի վստմութիւն
ընծայող մարդիկներ են, կարծեմ մեր
երեւակայած կանանց ազատութիւնը
սոքա ունին արդէն, բոլորն ալ ժո-
ղովրդեան զաւակ են, անխորհրդ
և առանց տարբերութեան հարուստ և
աղքատք մի են, ժողովուրդն իւր գա-
ւակը ժողովուրդեան հետ խառնած է:
Չ'տեսնէ: Աւելի պատկառանք կը
վարուի այդ հանդիսին մէջ. հանդէ-
սը աղքատ գաւակն ալ աղքատն է: Սոյն
հանդէսներէն մէկուն վրայ քանի մը
խօսք գրեմ ձեզ, որուն տեղադրեք «վե-
ցին զանգաւահարութիւն» անունը կու-
տան:

Սոյն հանդէսը, որ միայն Յիւրիկ
գաւակին մէջ կը տօնեն, քանի մը
բաներով մեր Մահմադըրութեան
հանդէսին հետ կը համեմատուի և կը
տօնեն գրեթէ բոլոր գաւակի ժողո-
վուրդը իւր իւր քաղաքում ամեն տա-
րի մարտ մէկին:

Հանդէսին արտաքին վարկերը ըն-
կարգելու խիստ դժուարին է, սա-
կայն ընթերցողին գաղափար մը տա-
լու համար քանի մը գլխաւոր բաները
յիշեմ:

Հաղաքէն աւելի 8 էն մինչև 20 տա-
րեկան մանչ և աղջիկներ դրեթէ աչ-
խարհիս ամեն ազգաց տարազները հա-
գած կատարելագոյն տեսքով կը ներ-
կայացնեն իրենց դէմքին դանդաճ
գունաւորութեամբը, հագած զգե-
տովը, շարժմամբը, ձևերովը այնպէս
որ, անդ կը տեսնես Անդրեւացի ճա-
նապարհորդները, Գաղղիա, Ամերի-
կա, Տաճիկ, Պարսիկ, Արապ, Խա-
շիկ, Չին, Ճաբոն, Յոյն, Հայ վերջա-
պէս ամեն աղքատը քաղաքի, գոր-
ծերը, զինուորները ևն. ևն. Ս. Մարգ-
ղուիցեական երկրորդ իւր բարձրաբեր-
ժաններով կը ներկայանայ, զորն որ
կուրքի մը վրայ տարածուած սաւա-
նով մը ձևացուցեր են, իւր բոլոր գա-
ւակներով և զեղեցիկ պատկերներու-
վը, որոյ վրայ բազմած է 18 ի մօտ
երիտասարդուհի մը, ողբին Չուրից-
իւր, չըլլապատուած զուկերական ըն-
տանեօք և ժողովուրդօք, վրձնիկ պա-

տանեակը խոշոր հրացաններն յուս-
գրած զինուորական ընթացքով կը
քայլեն, քանի քանի նուագարանաց
խումբեր հանդէսի շարքին մէջ բա-
նուած կը նուագեն, խումբ մը աղջիկ-
ներ կացիններ բռնած ձեռքերին.
ուրիշ խումբ մը, մեծ կակ կառքի մը
վրայ կանգնած կ'երգեն, ուրիշ մը
հրեշտակի թռչններով պնդուած, մէկ
խօսքով հազարի չափ սոյն հանդէսը
ներկայացնող մանկանց իւրաքանչիւրը
առանձինն զգեստով, առանձին պաշ-
տօն մը կը կատարէ, մինչև իսկ երկու-
վորքիկ տղայք ալ քանանայական ըզ-
գեստով ճիզուկութեամբ ճիշդ երգա-
մը կը ձևացնեն: Այդ սոյն մանկուն-
քը առաւօտեան ժամը 9 էն սկսեալ
մինչև երեկոյան 6 ը, ամբողջ քաղա-
քին մէջ կը շրջին, յայտնի է թէ ժո-
ղովրդեան անհուն բազմութիւն մը
հանդիստեսն է այդ սրտազարտ հո-
սանքին:

Գտնով սոյն հանդիսի նպատակին,
ոմանք կըսեն թէ պարզապէս գարնան
ողջին մը տալ է, ոմանք թէ՛ երբեմն
բռնաւորք Յիւրիկը քանդել ուղղով,
տղայ մը զայս կ'իմանայ և իւր քաղա-
քացուն կ'իմացնէ, որով կ'ազատեն
զայն, այս պատճառաւ տղոց ի պա-
տիւ այդ հանդէսը կը տօնեն, ուրիշ-
ներ՝ ուրիշ մեկնութիւն կուտան, բայց
ամենէն հաւանականը իւրեւ թէ, ինչ-
պէս ոմանք կ'ըսեն, հեթանոսական
ժամանակէ մնացած է, և նոյն ժամա-
նակներում, դարնանամուտին զանա-
զան գործաւոր և արհեստաւոր խումբ-
բեր, գործան երկայն օրերուն լրաւով
այնտեղով, արհեստական լոյս պէտք
չունենալուն համար իրարու կը շնոր-
հաւորեն զայն և այդ փոքրիկ խումբ-
բերու մասնաւոր ուրախութիւնը եր-
թալով ժամանակին հետ մինչև այս
հրաշալի ներկայացման հասած է,
այս վերջինը, ինչպէս ըսի, աւելի հա-
ւանական կ'երևի անոր համար որ ար-
դէն հանդէսը վրցին վերջնալով կըս-
կըսին ընդհանուր զանգաւահարու-
թիւն ամեն կողմ, և ինչպէս Հայաս-
տանի զանազան տեղերը Տաւուշիցա-
նալին եկեղեցուն բաւել կամ տները
մեծ կրակներ կը վառեն, նոյնպէս նաև
սոքա զանգաւահարութեան հետ նաև
ամեն տեղ ահագին բոցեր կը բոր-
բոքեցնեն:

Սոյն համառօտ նկարագրութեամբ
գիտեմ որ ընթերցողն երբեք չը կըր-
նար ըսել ինչ պէս թէ մեր հանդէս-
ներէն ամենապատիկ շքեղ, տաանա-
պատիկ աղբու հանդէս մ'է. սա-
կայն ևս աւելի վստմ կը դառնամ անոր
համար, որ՝ արուեստը, դիտութիւնը
և կրթութիւնը կը տեսնուէր սորա
մէջ, անոր համար վառն զի ամբողջ
բազմութիւնը եռանդ, ոգի, շար-
ժում և սէր միացուցած է միտադարձ,
աւելի վստմ անոր համար որ ժողո-
վուրդը չէ թէ միայն կ'այգանէ որ
«հարմու աղջիկներ» այդ հանդիսին
մէջ կ'երգեն, կը պարեն, այլ իր յա-
ւի որ՝ իր գաւակը կամ քաղաքը այդ
խմբին մէջ չէ, այլ աւելի համալրա-
նօք և աւելի գոթութեամբ կը նայի
անոր վրայ, իսկ նա ևս իւր կողմէն
զորդալով չ'ընկերայանար իւր հարց
և մարց, իւր ժողովուրդին, այլ խումբ-
բին մէջ աւելի զուարթ, աւելի կայ-
տառ և աւելի գեղեցիկ է (թէպէտև
տեղւոյն ընդհանուր ազգաբնակչութեան
մէջ, զեղեցիկ կին մը բացառութիւն
է կամ հրաշք). արդէն սոյն փոքրիկ
ժողովուրդեան ել անկութիւնը, մեր

Հայաստանի հարստահարութեանց հա-
ւասարակիւ կ'ուզայ: միայն մէկ յատ-
կութիւն մը շատերուն վրայ տիրած
է, այսինքն ժառանգութիւն՝ որուն տն-
տեսութիւն պէտք է ըսել. իսկ մար-
դասիրութիւն, այնպատութիւն, ու-
սումնասիրութիւն, ուրախութիւն ևն.
կատարեալ պատկերն է իրենց, հե-
տեւաբար սոյն տեսակ հանդէսներու
մէջ տեսնուած կարգ, կանոն, քաղա-
քավարութիւն իրաւի զմայլում, հիա-
ցում կազմէն զգայուն սրտի մը:

Այդ ժողովուրդական սոյն ընդհա-
նուր հանդէսներն ալ իւրեւ միջոց նո-
րա զգոցողման և յառաջագիւծութեան
տարիճանին, լուազոյն է նաև նոյն
իսկ ազգային կեանքին հետ կապ ու-
նեցող շատ մը հանդէսներ ունենալ,
և որ՝ եթէ ժամանակին հետ նաև
մենք ալ միմիայն, նոյնութիւններն ըն-
դունիլ կ'ուզենք, ընդունինք այն ճո-
րութիւնները որք՝ չէ թէ հինը կը լու-
ծանեն, ալ կը լուսն զայն, չէ թէ
մէկ հատիկ հանդէսին ալ բանալիքի
ձև տալ, այլ մարդիկ զայն իւր հնոտի
գաղափարներէն և աւելի վստմացնել,
չէ թէ եկեղեցական հանդէսները լու-
ծել, որով և աղքատ կը լուծուի, այլ
յարմարցնել զանոնք ներկայ կեանքին,
գարուն ոգւոյն հետ:

Այո, սիրելի ընթերցող, Մայիսի
24 ը՝ միշտ սովորականէն աւելի վստմ
և աւելի յիշատակաց արժանի նա-
խաձախդրութեամբ տօնելը ան-
շուշտ իւր օգուտներն ալ հետ կը բե-
րէ, և ինչ անկարելի որ՝ դարձող, եկե-
ղեցի, թատրոն, գիրք ևն. կը նկա-
տես, նոյնպէս նաև նկատէ ազգային
զարգացման միջոցներն մին նաև ազ-
գային հանդէսները, իսկ ևս շնորհա-
ւորելով զեզ, նոր շրջան, նոր տարե-
դարձ զեզ հետ կ'ըլլամ ոգւով ի Պէյ-
քոզ:

Պ. Դեւրեան

Յ. Գ. Վաստ գտնուող պարոնները դի-
տողութիւն կըսեն թէ՛ Հայերէն յօդ-
ուածներ քիչ կը գրեն Մանդուկի մէջ
սակայն յայտնի է թէ՛ «հէր քէսին եօ-
րուտուրու երթու խան եւրամազ րէք
միւշիւլ տիւր»: իսկ եթէ ինչ ներք
դիտողութիւն ընել, սա բոսմ միայն
Մանդուկի չեմ կ'արդար սիրով, և թէ
«քիլիսէնէ իսլահաթ» վերնագրով յօդ-
ուածիւ պէս յօդուածներ չ'պարունա-
կէ որով թարգմանութիւնը բրի տեղ-
ւոյս Ռուսահայ ուսանողաց, համակրե-
ցին շատ, միայն դիտելով որ՝ նորաս-
տեղծ կաթիլք չէ»:

Նամակս վերջապէս ձեռն արդէն
երբ Մանդուկի 2193 և այլ թիւերն
ստացայ, որոց մէջ «Գիլիսէնէ իսլա-
հաթ» յօդուածը վերջապէս էր, շատ
ապրիլ, Պոլիս տարին 3-ի անգամ կը
մտնէի եկեղեցի, բայց հոս ամէն կի-
րակի կը վազեմ օտարին եկեղեցին զի՝
Չեր ըսածներուն համարն բոլորն ազ-
կութիւնը կը ներկայացնէ...:

«Երբ կայ որ՝ մեր երևակայեալ ըն-
կերութիւնը որ այժմ իրականացած է,
ապագային արդիւնաբեր ըլլալ Աղգին.
սակայն դարձեալ մանրամասն չեմ գը-
րեր այս նիտումամբ, զի լուր որոշուած
է, յուսամ որ քիչ ատենէն նոյն իսկ
ընկերութեան նամակն կ'ստանայ,
կ'ողջունեմ զՁեզ սրտանց»

Նոյն